ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԿԿ-ԳՀԾՁԲ-21/09

«09» փետրվարի 2021 թ.

ք. Երևան

Կադաստրի կոմիտեն, ի դեմս գլխավոր քարտուղար Ա. Թովմասյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Բեսթ Սոֆթ» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Հ. Մարգարյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ծրագրային ապահովման սպասարկման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 2.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 2): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 14800000 (տասնչորս միլիոն ութ հարյուր հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է 11 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2 և N 2.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.15 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կատարողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության

պահանջները: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Կադաստրի կոմիտե	«ԲԵՍԹ ՍՈՖԹ» ՓԲԸ
ք. Երևան, Արշակունյաց 7	Հասցեն՝ ք.Երևան, Չարենցի 1
ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն	Ամերիաբանկ ՓԲԸ
Հ/Հ 900011030815	հ/հ 1570004845660100
ՀՎՀՀ 02534328	ՀՎՀՀ 01568139
Գլխավոր	
քարտուղար՝ Ա. Թովմասյան	տնօրեն Հ. Մարգարյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ.

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության						մատուցման	
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Տեխ. Բնութ.	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	Ընդհ. քանակը	հասցեն	Ժամկետը**
1	72261160/506		դրամ	14800000	1	ք.Երևան, Արշակունյաց 7	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած մինչև 25.12.2021 թ.

h/h	Անվանումը	Տեխնիկական բնութագիրը
1	Ծրագրային ապահովման սպասարկման ծառայություններ	**Ծրագրային ապահովման սպասարկման ծառայություններ** 1. Սույն տեխնիկական բնութագրի համաձայն էլեկտրոնային համակարգերի, համակարգչային սերվերների ծրագրային սպասարկման և պահպանման ծառայությունների մատուցողը (այսուհետ՝ Սպասարկող) պետք է կատարի ծրագրային սպասարկման հետևյալ աշխատանքները՝ 1.1. Կազմակերպել Կադաստրի կոմիտեում (այսուհետ՝ Կոմիտե) ներդրված էլեկտրոնային համակարգերի, դրանց համալրող միջոցների և ծրագրերի սպասարկում. 1.2. Ապահովել Կոմիտեի էլեկտրոնային համակարգերի սերվերների օպերացիոն համակարգերի և ծրագրային սպասարկում. 1.3. Կատարել սերվերների ծրագրային ապահովման (օպերացիոն համակարգերի Linux Ubuntu, Centos) պարբերական վերաթարմացում. 1.4. Սերվերներում տեղադրված Էլեկտրոնային համակարգերի կամ սերվերների ծրագրային բաղադրիչների պարբերական վերաթարմացում, ծրագրային բաղադրիչները տրամադրվելու են կոմիտեի կողմից. 1.5. Սերվերների հսկում (մոնիտորինգ), ինչպես նաև առաջացած խնդիրների լուծման տարբերակների առաջադրում: Մոնիտորինգի հնարավորության ստեղծում և տրամադրում Կոմիտեին՝ կիրառվող սերվերային ռեսուրսների օգտագործման մակարդակը արտացոլող հաշվետվության տրամադրում առցանց եղանակով (web monitoring): 1.6. Նոր սերվերների կարգաբերում, ապահովելով համակցումը դրանց և համակարգում գործող սերվերների միջև. 1.7. Ապահովել կոմիտեի տեղեկատվական համակարգի ենթակառուցվածքը սպասարկող սերվերների հսկումն ու առաջացած խնդիրների լուծումը, 1.8. Ապահովել սերվերների անվտանգությունը: Անվտանգությունը

		պատշաճ մակարդակով ապահովելու համար կատարել սերվերների անթույլատրելի ներխուժումներին, վիրուսային վտանգներին, անթույլատրելի ծրագրերի տեղադրմանն ու չարտոնված այլ գործողություններին ուղղված միջոցառումներ. 1.9. Սերվերներում պահվող տվյալների պարբերական արխիվացում և անհրաժեշտության դեպքում տվյալների վերականգնում 1.10. «Հայաստանի անշարժ գույքի տեղեկատվական համակարգ» էլեկտրոնային համակարգը սպասարկող թվով մինչև 50 վիրտուալ սերվերների ծրագրային ապահովման (Apache, Tomcat, Oracle Spatial, MySql, GeoServer, Tilecache) թարմացում, անհրաժեշտության դեպքում կարգաբերում, պահուստային պատճենների ստեղծում (օրեկան, շաբաթական, ամսեկան կամ ըստ անհրաժեշտության՝ փոփոխությունների դեպքում) և անհրաժեշտության դեպքում վերականգնում պահուստային պատճեներից 1.11. Կատարել «Հայաստանի անշարժ գույքի տեղեկատվական համակարգ» էլեկտրոնային համակարգի քարտեզագրական մոդուլի կամ ինտեգրված նոր քարտեզագրական համակարգի համար նախատեսված սերվերների տեղադրում, կարգաբերում և քարտեզագրական նյութերի ներբեռնում՝ ապահովելով համապատասխան կոորդինատային համակարգի համակցում և մասնատում 1.12. Անհրաժեշտության դեպքում նոր վիրտուալ սերվերների ստեղծում և կարգաբերում. 1.13. Ապահովել «Հայաստանի անշարժ գույքի տեղեկատվական համակարգ» էլեկտրոնային համակարգի անվտանգությունը՝ բացառելով չարտոնված մուտքերի հնարավորությունը. 1.14. Անմիջական տվյալների փոխանցման երթուղավորում դեպի Ինտերնետ 1.15. Proxy-սերվերի միջոցով ապահով կապ դեպի Ինտերնետ (WWW, HTTP, HTTPS, FTP և այլն). 1.16. Տրամադրել Proxy-սերվերի միջոցով իրավունքների ավելացման, խմբագրման և հեռացման հնարավորության ծրագրային ապահովում Web արտադեմով, 1.17. DNS (Domain Name Service) ծառայության սպասարկում cadastre.am, mail.cadastre.am դոմենների համար. 1.18. Էլեկտրոնային փոստ (E-Mail) ծառայության սերվերի տեղադրում և սպասարկում (ապահովելով SMTP, POP, IMAP, Mailing Lists հնարավորությունները), (E-Mail) ծառայության ադմինիստրատիվ աշխատանքների հետ կապված ծառայությունների մատուցում և արտադեմի ստեղծում էլեկտրոնային հասցեների ստեղծման, հեռացման, խմբագրման, գաղտնաբառի փոփոխման, հիշողության ծավալի փոփոխման համար: 1.19. էլեկտրոնային փոստի հակավիրուսային և այլ պաշտպանությունով (Antivirus, Antispam, Antispyware support) ծրագրային ապահովում.

		1.20. Վեբ Էլեկտրոնային փոստ (Webmail) ծառայության սպասարկում HTTPS անվտանգ միացման հնարավորությունով. 1.21. Էլեկտրոնային փոստի պահուստային պատճենների ստեղծում ամենօրյա ռեժիմով. 1.22. Ներքին օգտագործման Վեբ կայքերի անվտանգության ապահովում. 1.23. Հասանելիություն ինտերնետային տեղեկություններին և տվյալների հենքերին (MySQL, LDAP). 1.24. Տվյալների անվտանգ ցանցային փոխանցում (VPN, VTUN, SSH, SFTP, SSL, Stunnel), հասանելիության ապահովում Կոմիտեի անհրաժեշտության դեպքում. 1.25. Բազմաշերտ ցանցային անվտանգություն (Firewall) ցանցային ներխուժման փորձերի ախտորոշման և արգելափակման ավտոմատացված համակարգով. 1.26. Ցանցային սերվերների և ծառայությունների հեռակառավարում. 1.27. Կոմիտեի պահանջով ստեղծել ներքին օգտագործման համակարգերի պահուստային պատճենների ստեղծման հնարավորություն. 1.28. Սերվերների և երթուղավորիչների կարգաբերում և սպասարկում(Server/Router configuration and maintenance). 1.29. Տեղադրել ցանցային հասցեների տրամադրման համակարգ DHCP. 1.30. Ստեղծել հնարավորություն տարբեր օպերացիոն համակարգեր ունեցող սերվերների և համակարգիչների միջև տվյալների և ֆայլերի փոխանակման համար. 1.31. Կոմիտեի սպասարկման գրասենյակների և տարածքային ստորաբաժանումների աշխատակիցներին տրամադրվող ինտերնետի համաչափ և համակարգված տրամադրման համար սպասարկման ընթացքում տրամադրել օպտիմալ կարգաբերման գործիք, որը հնարավորություն կընձեռնի սահմանափակել ինտերնետ հասանելիությունը՝ ըստ օգտագործողի, ըստ կայքի հասանելիության, ըստ օգտագործողին հասանելի կայքի և օգտագործողների համար ըստ արագության: 1.32. Ապահովել անխափան աշխատանք տվյալների փոխանակման Կադաստրի կոմիտեի կենտրոնական ապարատի, Կադաստրի կոմիտեի «Տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն» ստորաբաժանման, տարածքային (առանձնացված) ստորաբաժանումների և սպասարկման գրասենյակների միջև, պահուստային ճանապարհներով և վերականգնման ունակությամբ կիրառելով dynamic-routing (OSPF, RIP protocols). 1.33. Ապահովել ինտերնետի անխափան աշխատանքը պահուստային ճանապարհներով և վերականգնման ունակությամբ կիրարելով dynamic-routing (BGP protocol) ինտերնետ մատուցող կազմակերպության հետ. 1.34. Ապահովել տարբեր շահառուների հասանելիությունը Կադաստրի կոմիտեի ներքին ցանցին, կամ որոշակի համակարգերի և ծառայությունների, սահմանափակելով դրանց ըստ IP-ների և ծառայությունների 1.35. Ապահովել ցանկացած կետում օգտագործվող ծառայությունների (հեռախոսակապ, ներքին ցանց, առանձնացված սերվերներ և այլն) բաժանումը տարբեր Layer2 ենթացանցերի. 1.36. Տարբեր կետերի խմբավորումը ըստ ծառայությունների Layer2

		ենթացանցերի. 1.37. Ապահովել ուղղորդում (routing) վերոնշյալ Layer2 խմբերի միջև: 2. Ծառայությունը պետք է մատուցվի աշխատանքային օրերին, իսկ այն մասով, որը ապահովում է կոմիտեի ինտերնետային կայքերի անխափան աշխատանքի ապահովմանը, նաև ոչ աշխատանքային օրերին՝ կայքերի անխափան աշխատանքի համար ցանցային խոչընդոտների առկայության դեպքում, ինչպես նաև այն դեպքերում, երբ դա անհրաժեշտ է աշխատանքային օրերի ընթացքում ցանցի անխափան աշխատանքները ապահովելու համար: 3. Կատարողը պետք է սպասարկման ընթացքում ի հայտ եկած խոչընդոտների և առաջացած խնդիրների, ինչպես նաև անհրաժեշտ տեխնիկական միջոցների վերազինման մասին անհրաժեշտության դեպքում Պատվիրատուին ներկայացնի առաջարկություններ: 4. Կատարողը պետք է ունենա վերը նշված աշխատանքների, ինչպես նաև քարտեզագրական համակարգի աշխատանքն ապահովող սերվերների (Tomcat, GeoServer, Tilecache) տեղադրման և կարգաբերման առնվազն 3 տարվա աշխատանքային փորձ, 5. Սպասարկման ժամկետի վերջում Սպասարկողը պետք է կոմիտեին հանձնի սույն տեխնիկական բնութագրով նախատեսված աշխատանքների կատարմանը վերաբերվող բոլոր տվյալները (մուտքի անուններ, գաղտնաբառեր, ցանցի տոպոլոգիայի փոփոխությունների վերաբերյալ տեղեկություններ և այլն):

** ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Կադաստրի կոմիտե
ք. Երևան, Արշակունյաց 7
ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն
Հ/Հ 900011030815
ՀՎՀՀ 02534328
Գլխավոր
քարտուղար Ա. Թոխմասյան
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«ԲԵՍԹ ՍՈՖԹ» ՓԲԸ
Հասցեն՝ ք.Երևան, Չարենցի 1
Ամերիաբանկ ՓԲԸ
հ/հ 1570004845660100
ՀՎՀՀ 01568139

տնօրեն Հ. Մարգարյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 2
ԿԿ-ԳՀԾՁԲ-21/09 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 2.1
ԿԿ-ԳՀԾՁԲ-21/09 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

2021 թվականի փետրվարի 9-ին կնքված թիվ ԿԿ-ԳՀԾՁԲ-21/09 ծրագրային ապահովման սպասարկման ծառայությունների մատուցման պայմանագրի վճարման ժամանակացույցը հաստատելու մասին

22 փետրվարի 2021 թ.

ք. Երևան

Կադաստրի կոմիտեն (այսուհետ՝ կոմիտե), ի դեմս գլխավոր քարտուղար Ա. Թովմասյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ պատվիրատու), մի կողմից և «Բեսթ Սոֆթ» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Հ. Մարգարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ կատարող), մյուս կողմից, հիմք ընդունելով 2021 թվականի փետրվարի 9-ին կնքված ծրագրային ապահովման սպասարկման ծառայությունների մատուցման թիվ ԿԿ-ԳՀԾՁԲ-21/09 պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) 4.2 և 7.13 կետերով սահմանված պահանջները, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Հիմք ընդունելով պայմանագրի 4.2 և 7.13 կետերով սահմանված պահանջները՝ հաստատել պայմանագրի 1.1 կետով նախատեսված՝ ծրագրային ապահովման սպասարկման ծառայությունների մատուցման վճարման ժամանակացույցը՝ համաձայն հավելվածի:

1.2 Ծառայության դիմաց վճարումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության (պայմանագրի թիվ 2 հավելված) հիման վրա՝ սույն համաձայնագրի հավելվածով հաստատված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում, սակայն ոչ ուշ, քան 2021 թ.-ի դեկտեմբերի 30-ը:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում հաշվառման պահից, գործում է մինչև կողմերի կողմից Պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարման ավարտը և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ կողմերի կողմից պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն համաձայնագրի հավելվածը կազմված է 1 էջից և համարվում է համաձայնագրի անբաժանելի մասը:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պատվիրատու	**ԿԱՏԱՐՈՂ**
Կադաստրի կոմիտե	«Բեսթ Սոֆթ» ՓԲԸ
ք. Երևան, Արշակունյաց 7	ք. Երևան, Չարենցի 1
ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն	«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011030815	Հ/Հ 1570004845660100
ՀՎՀՀ 02534328	ՀՎՀՀ 01568139
Գլխավոր քարտուղար----------Ա. Թովմասյան	տնօրեն----------Հ. Մարգարյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ

Հավելված
09.02.2021 թ. կնքված թիվ ԿԿ-ԳՀԾՁԲ-21/09 պայմանագրի
թիվ 1 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

(ծրագրային ապահովման սպասարկման ծառայություններ)

ՀՀ դրամ

Ծառայության														
հրավերով նախատես. չ/բ համարը	գնումների պլանով նախատես.միջանց իկ ծածկ. ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում											
			փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	72261160/506	ծրագրային ապահովման սպասարկման ծառայություններ	1345000	2690000	4035000	5380000	6725000	8070000	9415000	10760000	12105000	13450000	14800000	14800000

Պատվիրատու

Կադաստրի կոմիտե
ք. Երևան, Արշակունյաց 7
ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն
Հ/Հ 900011030815
ՀՎՀՀ 02534328

Գլխավոր
քարտուղար----------Ա. Թովմասյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Բեսթ Սոֆթ» ՓԲԸ
ք. Երևան, Չարենցի 1
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570004845660100
ՀՎՀՀ 01568139

տնօրեն----------Հ. Մարգարյան
(ստորագրություն)
Կ.Տ.